# Հուսիկ Արա

## Այլևս բառ չես

Բառարանում գրված բառ էր ազատությունը,
մենք նրա մասին գիտեինք գրքերից
և հեքիաթանման ասքերից հեռվից եկող ասկետների:

Մենք որ լսել էինք նրա անունը միայն
և անգամ երկտող չէինք ստացել,
հիմա ստույգ կարդում է մեր հասցեն,
ամեն մի մանրուքը,
ու մանրամասն գիտի մեր օրը:
Նույնիսկ, թվում է, թե երկու ես ու մի մարմին ենք,
երբ լռում է մեկս, մյուսն է հսկում,
և անհնար է ձայնը լույսից տարբերել:

Ափիս մեջ նարնջագույն երիզներով
ծննդյան վկայականն է կնքված.
«Նաիրյան երկրի Նոր Հայաստան.
Քրիստոսից հետո երրորդ հազարամյակ,-
ու մի մատ խորքից գրված է
փոքրիկ ծանուցում բացիկի նման,-
մեր սպասման սիրուց ծնվեցիր,
հավատից համբերատար
ու վազեցիր մեր մեջ խայտալով,
ինչպես մեր հնագույն երկրի մանուկ աստվածն էր,

որ ծիրանագույն ծովում էր երկնել.
կրակ էր, և աչքերն էին արեգակներ»:

Մանր տառերով
այլ մանրամասներ էլ է գրված լուսանցքում.
«Այլևս բառ չես, ազատություն,
ոչ էլ ասկետի պատմած հեքիաթ.
սեպտեմբերյան թավշե օր ես,
ուր արևախառն ձյուն կա փետրվարից,
և որպես լույսից փքված առագաստ՝
պարզվել ես հող ու արևին»: